ելապէս կտաւեղէններ գործելով։ Այդ գործուածքները և զանազան տեսակ մրգեղէնները գիւղէ գիւղ ման գալով ծախում են։

Երբ մի «Գարա—Գոյունցու» հարցնում ես «ի՞նչու դուք Ալուն աստուծոյ որդի էք դաւանում», նա պատասխանում է՝

—«Նրան, որին դուք Քրիստոս էք անուանում, միևնոյն է, որին մենք Ալի ենք ասում, զանազանութիւնը անուան մէջն է միայն. մեր և ձեր մէջ եղած տարբերութիւնը սոխի կչեւի չափ է։

Այս ամենից զկնի ունկնդիրը թերևս կը սպասէ, որ ես եղրակացութեան համար անպատճառ «Գարա—Գոյունցոց» բռնութիւնից թուրքացած հայեր կը հրատարակեմ։ Եթէ մենք չորս միլիոն թուի տեղը տասը ունենայինք, դրա օգուտն ի՞նչ, որ դրանցից մտքի, կամքի, անբողջութիւն չէինք կարող կազմել։ Սերբերը Սևսարեցիները, Բոլգարները Տաճկահայերից քիչ են, բայց մի տեսակ մտածողութեան, մի տեսակ զգացողութեան համազգային կապով մարմիններ են կազմում։ Եթէ «Գարա—Գոյունցիք» իսկապէս թուրքացած հայեր ևս լինէին, ի՞նչ կարող էինք անել նրանց...Ի՞նչ են անում նրանց, որոնք դեռ թուրքացել չեն և նրանց, որոնք նոր թուրքանում են։...

Վայոց ձորումը մօտ հարիւր գիւղ թուրքա-